

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.188>

## Azerbaijani Pseudoscientific Theses and Propaganda Tools about Anti-Semitism in Armenia

Arshaluys Teteyan

<https://orcid.org/0009-0001-3613-4647>

YSU Faculty of History, PhD at the Chair of History of Armenia's Neighboring Countries, Associate Professor

[a.teteyan@ysu.am](mailto:a.teteyan@ysu.am)

**Keywords:** Anti-Semitism, Azerbaijani falsification, Jewish community, Resistance Movement, Righteous Among the Nations, World War II, Manouchian Group.

*In the context of modern geopolitical events, an important place is occupied by the study and analysis of false theories and theses about anti-Semitism in Armenia, which are disseminated by Azerbaijani scientific, social and political circles. This article presents the inconsistency of Azerbaijani propaganda theses disseminated by foreign, including Jewish experts, analysts, whose goal is to create a negative opinion about Armenia in the current geopolitical stage, disseminating false information about the intolerance of the Armenian people. The purpose of this propaganda is to divert the attention of the international community from the genocidal actions of the Azerbaijani side during the 44-day Artsakh War and in subsequent years. All these theses are baseless and have no sources or factual basis. This article, based on an analysis of factual material, presents the support of the Armenian communities for the Resistance movement in various European countries and numerous cases of rescue of Jews. The Jewish community of Armenia has been mentioned since ancient times. The situation and activities of Jews in Armenia during the period of the Russian Empire and later in the Soviet Union are also presented, which once again proves the inconsistency of attempts to create contradictions between the two peoples and accusations of anti-Semitism in Armenia.*

**Հայաստանում հակահրեականության (հակասեմիտականության) վերաբերյալ ադրբեջանական կեղծ թեզերն ու քարոզչական միջոցները**

**Արշալույս Տետեյան**

ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոն, պ. գ. թ., դոցենտ

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 188-196



Received: 11.06.2024

Revised: 17.07.2024

Accepted: 30.08.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

**Հիմնաբառեր՝** Հակահրեականություն, ադրբեջանական կեղծարարություն, հրեական համայնք, Դիմադրության շարժում, Ազգերի առաքյալներ, Երկրորդ աշխարհամարտ, Մանուշյանի խումբ:

*Հոդվածը նվիրված է աշխարհաքաղաքական ներկա զարգացումների համատեքստում մի կարևոր հիմնախնդրի՝ ադրբեջանական պատմագիտական, հասարակական, քաղաքական շրջանակների կողմից Հայաստանում հակահրեականության վերաբերյալ կեղծ տեսությունների և թեզերի քննությանը և վերլուծությանը: Հոդվածում ներկայացվում են օտարերկրացի, այդ թվում հրեա փորձագետների, վերլուծաբանների կողմից շրջանառվող ադրբեջանական քարոզչության թեզերի սնանկությունը, որոնց նպատակն արդի աշխարհաքաղաքական շրջափոխում Հայաստանի շուրջ բացասական կարծիքի ձևավորումն է, հայ ժողովրդի անհանդուրժողականության վերաբերյալ ստահող տեղեկությունների տարածումը, մինչև 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում և հաջորդ տարիներին ադրբեջանական կողմի ցեղասպան գործողություններից միջազգային հանրության ուշադրության շեղումը: Այս բոլոր թեզերը հիմնազուրկ են, չունեն որևէ աղբյուրագիտական և փաստական հիմք: Ներկայացված հոդվածում փաստական նյութերի վերլուծության հիման վրա ներկայացվում է Դիմադրության շարժմանը հայկական համայնքների ցուցաբերած աջակցությունը եվրոպական տարբեր երկրներում, հրեաների փրկության բազմաթիվ դեպքեր: Անդրադարձ է կատարվում հնագույն ժամանակներից Հայաստանում առկա հրեական համայնքին: Ներկայացվում է նաև Ռուսական կայսրության, հետագայում Խորհրդային Միության ժամանակաշրջանում Հայաստանում հրեաների դիրքը, գործունեությանը, որոնք մեկ անգամ ևս զալիս են ապացուցելու երկու ժողովուրդների միջև հակասությունների առաջացնելու փորձերի և Հայաստանում հակահրեականության վերաբերյալ պնդումների սնանկությունը:*

### **Азербайджанские псевдонаучные тезисы и инструменты пропаганды об антисемитизме в Армении**

**Аршалуїс Тегеян**

Кафедра истории сопредельных с Арменией стран ЕГУ, кандидат исторических наук, доцент

**Ключевые слова:** Антисемитизм, Азербайджанские фальсификации, Еврейская община, Движение Сопротивления, Праведники народов мира, Вторая мировая война, группа Манушяна.

*В контексте современных геополитических событий важное место занимает изучение и анализ ложных теорий и тезисов об антисемитизме в Армении, которые распространяют азербайджанские научные, общественные и политические круги. В данной статье представлена несостоятельность азербайджанских пропагандистских тезисов, распространяемых зарубежными, в том числе еврейскими экспертами, аналитиками, целью которых является создание негативного мнения об Армении в нынешнем геополитическом этапе, распространение ложной информации о*

**Հայաստանում հակահրեականության (հակասեմիտականության) վերաբերյալ ադրբեջանական կեղծ թեզերն ու քարոզչական միջոցները**

*нетерпимости армянского народа. Целью этого - отвлечения внимания международного сообщества от геноцидальных действий азербайджанской стороны в ходе 44-дневной Арцахской войны и в последующие годы. Все эти тезисы безосновательны, не имеют никаких источников и фактической основы. В данной статье на основе анализа фактического материала представлена поддержка армянскими общинами движения Сопротивления в различных странах Европы, многочисленные случаи спасения евреев. Упоминается еврейская община Армении с древнейших времен. Также представлены положение и деятельность евреев в Армении в период существования Российской империи, позднее в Советском Союзе, что еще раз доказывает несостоятельность попыток создания противоречий между двумя народами и обвинений в антисемитизме в Армении.*

\* \* \*

**Ներածություն:** Տարիներ շարունակ Ադրբեջանում, դժբախտաբար նաև նրա սահմաններից դուրս, ծավալվում է Հայաստանի շուրջ գրպարտչական արշավ, որի նպատակը մեր երկրում հակահրեականության (հակասեմիտականության) առկայության, ավելին՝ դրա վտանգավորության աստիճանի մասին հերյուրանքների և կեղծիքների տարածումն է: Ընդ որում այս արշավին ադրբեջանցիներից բացի, ակտիվ մասնակցություն են ունենում նաև բազմաթիվ օտար, այդ թվում հրեա փորձագետներ և վերլուծաբաններ: Դժբախտաբար այս հերյուրանքների տարածմանը ներգրավվում են նաև կրոնական գործիչներ, որոնց թվում է օրինակ Բաքվի գլխավոր ռաբբի Ջամիր Իսաևը, որը տարբեր հարթակներից պարբերաբար բարձրաձայնում է հրեաների համար Հայաստանում մնալու վտանգավոր հետևանքների մասին (Բաքվի ռաբբին կոչ է անում հրեաներին լքել Հայաստանը եւ տեղափոխվել Ադրբեջան):

Վերոնշյալ մասնագետները դիմում են ամենատարբեր կեղծիքների ու նենգափոխությունների, իրենց նպատակներին ի շահ խեղաթյուրում և շահարկում են հայ-իրանական հարաբերությունները: Նրանցից ոմանք հավանաբար փորձելով առավելագույնս փոխհաստուցել շոայլ վարձատրությունները, քարոզչական այս արշավի ընթացքում չեն խորշում նաև իրենց շահարկումների մեջ ընդգրկել Երուսաղեմի հայոց պատրիարքությունը (**Weiner W.**, Anti-Armenian Propaganda on The Eve Of The Centennial Of The Armenian Genocide In The Jewish Press):

Այս բոլոր հերյուրանքները հերքվել, դրանք տարածող հեղինակներին դիմակազերծել, նրանց նպատակները պարզաբանել են Հայաստանի հրեական համայնքի հոգևոր առաջնորդ, ռաբբի Գերշոն Մեիր Բուրշտեյնը, համայնքի ղեկավար Ռիմա Վարժապետյան-Ֆելլերը և ուրիշներ: Համայնքի ղեկավարը 2014-2015 թթ. հրեական մի շարք պարբերականներում հրատարակված բացահայտ կեղծիքների կապակցությամբ նամակ հղեց Ամերիկայի հրեական կոմիտեի գործադիր տնօրեն Դեյվիդ Հարրիսին (Ռիմա Վարժապետյանը դիմակազերծել է իսրայելական պարբերականներում հակահայ հոդվածների հեղինակներին):

Ինչպես արդեն նշեցինք, ադրբեջանական քարոզչության հիմնագուրկ դրույթները, սնանկ թեզերը տարածվում են ընթերցողների լայն շրջանակ ունեցող հրեական լրատվական կայքերի, պարբերականների միջոցով, որոնցից են «Հասարեցը», «Ջերուսալեմ Փոսթը», «Նյու Ալգեմայները»: Բնականաբար այս ամենը բացասական ազդեցություն է ունենում՝ տարբեր երկրներում

Հայաստանի և հայ ժողովրդի վերաբերյալ ձևավորելով թյուր և խեղված պատկերացումներ: Հետևաբար անհրաժեշտ է լուրջ աշխատանք տանել այդ գրապարտությունները բացահայտելու և հնարավորինս օտարալեզու հանրությանը ներկայացնելու ուղղությամբ:

**Ադրբեջանական լայն տարածում ստացած կեղծ թեզերը:** Ադրբեջանական քարոզչության թեզերի շարքում վաղուց հայտնի և բազմիցս չարչրկված գլխավոր կեղծիքը վերաբերում է Հայկական լեզունին և վերջինիս՝ Եվրոպայում հրեաների նկատմամբ իրականացված Հոլոքոսթին մասնակցության վերաբերյալ: Այս դրույթը ժամանակին առաջ է քաշվել որոշ թուրք պատմաբանների կողմից: Օրինակ՝ Սալահի Սոնյելն իր «Մեծ պատերազմը և Անատոլիայի ողբերգությունը» գրքում առանձին ենթագլուխ վերնագրել էր «Հայերի և նացիստների միջև համագործակցությունը»: Թուրքական քարոզչությունը այնքան հեռուն էր գնացել, որ «Թուրքիշ Ֆորում»-ի էջերում 2001 թ. օգոստոսի 12-ին հրապարակել էր «Հայերի դերը Եվրոպական հրեաների բնաջնջման հարցում» հոդված [Yair A., 2003, 260-261]:

Ադրբեջանական քարոզչությունը յուրացնելով այս դրույթները, դրանք հարստացրեց նոր պատումներով և սկսեց մատուցել մի շարք հրեա հեղինակների կողմից գրված հոդվածների միջոցով: Այս շարքին են պատկանում Արիե Գուտը, Ալեքսանդր Մուրինսոնը, Մաքսիմ Գուաին, Ալեքսանդր Ֆրիդմանը, Մաայան Ջեֆի-Հոֆմանը և այլք [Maxime Gauin, Alexander Murinson **Baku to the future: Azerbaijan, not Armenia, is Israel's true ally**, Alexander Murinson, **Anti-Semitism in Armenia** Gut A., Armenia immortalizes fascists, anti-Semites who participated in the Holocaust]:

Վերոնշյալ հեղինակների շարքում հատկապես աչքի ընկավ հրեա փորձագետ Արիե Գուտը, որը մի շարք հայտնի պարբերականներում սկսեց հանրայնացնել հայերին վարկաբեկող նյութեր: Նրա հոդվածները սկսեցին լայնորեն տարածվել ադրբեջանական մամուլում, պարբերականներում: Ա. Գուտի դրույթներն են ընկած 2020 թ. ադրբեջանական անգլալեզու «Ժառանգություն» ամսագրում տպագրված Ա. Ազիմզադեի «Հակահրեականությունը և հրեաների կյանքը Հայաստանում» հոդվածի հիմքում:

Հայրենական պատերազմի և Երկրորդ աշխարհամարտի տարիներին Հայկական լեզունի գործունեությանը նվիրված բազմաթիվ աշխատություններ են գրվել, որոնց շարքում իհարկե առանձնանում են Է. Աբրահամյանի, Կ. Հարությունյանի ուսումնասիրությունները [Հարությունյան Կ., Հայկական լեզունը, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.), Абрамян Э., Кавказцы в Абвере, М., 2006, Армянский легион вермахата (1941-1945 гг.), Забытый легион: Неизвестные страницы соединения специального назначения "Бергманн"]: Դրանք հիմնավորապես ցույց են տալիս Հայկական լեզունի կազմավորման, տեղակայման, գործունեության բոլոր մանրամասները, որտեղ չկա և չի կարող լինել որևէ դրվագ կամ քայլ՝ ուղղված հրեական բնակչության դեմ: Հակառակը տասնյակ դրվագներ կան Եվրոպայում հայերի կողմից հրեաների փրկության դեպքերի վերաբերյալ: Այստեղ հարկ էնք համարում մեջբերել միայն մեկ դրվագ հայ լեզունականների՝ սեփական կյանքը վտանգելու գնով, ռազմագերիների ճամբարից ազգությամբ հրեա Իոսիֆ Կոզանին փրկելու պատմությունը, որը մանրամասն ներկայացված է Մ. Հակոբյանի «Անհայտ կորած մարդիկ» գրքում [Հակոբյան Մ., 1964, 315-326]: Տարիներ անց Ի. Կոզանն ինքն իր նամակում պատմել է փրկության պատմությունը՝ անուն առ անուն նշելով իր փրկիչներին՝ Հարություն Խաչատրյան, Ալեքսանդր Ղազարյան, Ստեփան Յաղջյան, Ալեքսանդր Վարդանյան և ուրիշներ: Ավելին Ի. Կոզանն

**Հայաստանում հակահրեականության (հակասեմիտականության) վերաբերյալ ադրբեջանական կեղծ թեզերն ու քարոզչական միջոցները**

իմանալով ԽՍՀՄ-ում իր փրկիչներից մեկի՝ բժիշկ Ն. Խաչատրյանի ձերբակալության և քստրի մասին անձամբ նամակ էր հղել խորհրդային ՊԱԿ-ին [Հարություն Խաչատրյան-Ազգերի առաքյալ]: Հետագայում Բժիշկ Հարություն Խաչատրյանը դարձավ Յադ Վաշեմի կողմից «Աշխարհի արդարակյաց» հոչակված 24 հայերից մեկը՝

«Աշխարհի արդարակյացների» շարքում 24 հայերի պատմությունները ևս մեկ ապացույց են հազարավոր հրեաների կյանքեր փրկելու գործում նրանց ունեցած դերի վերաբերյալ: Նրանցից մեկը Հունգարիայում ապրող Արա Երեցյանը միայն փրկել էր 400-ից ավելի հրեաների կյանք: Ադրբեջանական փորձագետները որքան էլ ուշադիր և մանրազնին փնտրեն, դժվար թե «Աշխարհի արդարակյացների» ցուցակում գտնեն որևէ ադրբեջանցու անուն:

Մինչդեռ հրեա պատմաբան Յաիր Օրոնի կարծիքով «Աշխարհի արդարակյացների» ցուցակում հայերի թիվը կարող է ավելին լինել, քանի որ շատ իրողություններ դեռ լիովին ուսումնասիրված չեն: Հրեա պատմաբանը գրում է, որ Հոլոքոստի ժամանակ բազմաթիվ հրեաների է փրկել Բուխարեստի եպիսկոպոսը՝ հետագայում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա-ն: 1944 թ. Բուդապեշտի հայ առաքելական եկեղեցին փրկել է ավելի քան երկու հարյուր հրեայի կյանք [Օրոն Յ., 2017, 20]:

3. Օրոնն իր վերջին գրքում՝ «Փրկիչներ և մարտիկներ: Կարեկցանք ու հերոսություն: Ազնավուրյանների ընտանիքն ու «Կարմիր ազդը» Փարիզում, նացիստական բռնազավթման տարիներին», անդրադառնալով Երկրորդ աշխարհամարտի տարիներին Շառլ Ազնավուրի ընտանիքի սխրանքին և տասնյակ հրեաների փրկության խնդրին հարցնում է. «Ինչո՞ւ է այս պատմությունն անհայտ մնացել այն դեպքում, երբ Շառլ Ազնավուրը միջազգային հոչակ ունեցող անձ է, առնվազն երեք ինքնակենսագրական գիրք է գրել» [Օրոն Յ., 2017, 11-12]: Այս հարցին ինքը Շառլ Ազնավուրը պատասխանում է. «Եթե դու կտուրից բղավում ես այն օգնության մասին, որ կարող ես բերել կարիքի կամ դժբախտության մեջ գտնվող քո մերձավորին, ապա դա հավասարազոր է ոչինչ չանելուն» [Օրոն Յ., 2017, 10]:

2017 թ. Իսրայելում Շ. Ազնավուրին շնորհվեց Ռաուլ Վալենբերգի անվան միջազգային հիմնադրամի մրցանակը՝ նրա ծնողների հերոսական գործունեության համար, իսկ **Նևե Շալոմ գյուղում՝ «Աշխարհի արդարները» պուրակի ձիթենիներից մեկի վրա տեղադրվեց մի քանի լեզուներով գրված ցուցանակ հետևյալ գրությամբ՝ «Ի պատիվ Ազնավուր ընտանիքի, որ փրկեց հրեաներին և հայերին»** [Ի պատիվ Շառլ Ազնավուրի՝ ձիթենու ծառ Իսրայելի Նվե Շալոմ բնակավայրում]:

Վերադառնալով հայ ռազմագերիների խնդրին, նշենք, որ Ազնավուրյանների գործունեությունը ևս մեկ ապացույց է, թե ինչպես էր կազմակերպվում Հայկական լեգեոնում

---

՝ Յադ Վաշեմի կողմից «Աշխարհի արդարակյաց» հոչակված 24 հայերի մեծ մասը ԽՍՀՄ-ից և Ֆրանսիայից էր, մեկը Հունգարիայից: Նրանք էին Երեցյան Արա, Բերկյան Երվանդ և Էլվիս, Տաշյան Արամ և Ֆելիցիա, Հուգասյան Ալբերտ, Հուգասյան Մաքրուհի և Բերտա, Մկրտչյան Վարդան, Մկրտչյան Առաքել, Շահբազյան Քնարիկ, Տաշյան Գրիգորի, Տաշյան Պրան, Տաշյան Հասմիկ, Տաշյան Տիգրան, Քեշիշյան Հարութ, Քեշիշյան Զագորիկ-Նատալյա, Քեշիշյան Ալմաստ, Հակոբյան Աշխեն, Դիլսիգան Ժորժ, Դիլսիգան Անդրե-Գուստավ, Բադդասարյան Փիրուզա, Բադդասարյան Մարգիս, Խաչատրյան Հարություն:

հայտնված հայերի փախուստը: Միշտ Ազնավուրյանը 1946 թ. ներգաղթի կազմակերպման հանձնաժողովին ուղղված դիմումում գրում էր. «Օքիբասիոնի ամբողջ տևողության ծառայել եմ ռեզիստանտում տրամադրելով միաժամանակ տունս իբրև թաքստոց մեր փախստական ընկերներին և կարմիրբանակայիններ: Մեզ մոտ երկար ժամանակ պահվել են, ի միջի այլոց, ընկ. Մելինե Մանուշյանը, ընկ. Ոսկերչյան, ընկ. Աշոտ Սատտոֆ, Խաչատրյան (խորհրդային բանակի հայ զինվորներ, որոնք փախել էին ֆաշիստական գերությունից և միացել դիմադրության շարժմանը), որոնց հրահանգները սիրով կատարել ենք կինս և ես: Վերջին ժամանակներում նշանակված էինք գերմանական տարազ տալ կարմիրբանակայինների զանազան վայրերում տեղավորելու և Մաքի (պարտիզանների մոտ) ուղարկելու համար: 1944 թ. հունիսի 20-ին խույս տվի Փարիզից խստագույնս հետապնդված ըլլալով գերմանական գեսթապոյի կողմից» [Հարությունյան Վ., Շառլ Ազնավուրի անձնական գործը Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում]:

Ադրբեջանական թեզերի սնանկությունն ապացուցող մեկ այլ փաստարկ էլ Դիմադրության շարքերում հայերի և հրեաների համատեղ պայքարը, որի ամենավառ դրվագը Մանուշյանի խումբն էր: Նրանց բոլորի հերոսությունն ու գործունեությունն ապացույցների կարիք չի զգում, ինչպես օրինակ ադրբեջանցիների կողմից Դիմադրության շարժման մասնակից հռչակված Ահմադի Ջեբրահիլովի, որը կենսագրության որոշ դրվագներ ճշմարտացի չհամարելով Վիքիպեդիա ռուսալեզու էջը 2015 թ. այն վերանվանեց «Ջեբրահիլովի մասին առասպել» [«Миф о Джабраилове»], իսկ հանրագիտարանի ֆրանսերեն էջն ընդհանրապես գոյություն չունի [Bek heroю, полвека мифу]:

Ադրբեջանական քարոզչության մյուս հիմնագուրկ թեզը Հայաստանում ապրող հրեաներ դրության վերաբերյալ կեղծիքներն են: Մի շարք հեղինակներ, որոնց թվում Ալ. Մուրիստնը և Ս. Գաուլինը շահարկելով 1990-ական թթ. Հայաստանից հրեաների արտագաղթը զարգացնում են իրենց սնանկ տեսությունը մեր երկրում հակահրեականության վերաբերյալ: Սակայն բոլորին է հայտնի, որ Հայաստանից վերջին տասնամյակներում այդ թվում նաև հազարավոր հայերի արտագաղթի պատճառը երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական պայմաններն են:

**Վերոնջյալ հեղինակները հայտարարում են, որ հնագույն ժամանակներից Հայաստանում հրեաներին չեն ողջունել: Հասկանալի է, որ այս հեղինակների շահերից չի բխում հիշատակել հայ պատմիչների վկայությունները հնագույն ժամանակներից Հայաստանում ապրող հրեաների մասին: Նրանք անտեսում են նաև 2001-2002 թթ. հայ և հրեա մասնագետների կողմից Եղեգիսում հայտնաբերված հրեական գերազմանատան պեղումների փաստը, այդ թեմայով կազմակերպված գիտաժողովը [Հրեաները Հայաստանում. Միջնադար]:**

Ինչպես նշում է *ռաբբի Գերշոն Բուրշտեյնը* Երևանի գավառում չենք կարող գտնել հրեաների կոտորածի կամ այստեղից վտարման ոչ մի հիշատակություն: Ավելին, Հայաստանը ժամանակին կոչել են ազատ հրեաների երկիր. այստեղ երբեք չի եղել բնակչության սահմանագիծ, հրեաներն ազատ ապրել են բոլոր մեծ քաղաքներում: Անգամ հրեական հանրագիտարանում չկան Հայաստանում հակասեմիտիզմի փաստեր [«Հրեաներ, պահպանե՛ք հայերին», Իսրայելական «Դետալի» («Детали») ռուսալեզու կայքի հարցազրույցը Հայաստանի հրեական կրոնական համայնքի ռաբբունապետի հետ]:

**Հայաստանում հակահրեականության (հակասեմիտականության) վերաբերյալ աղբրեջանական կեղծ թեզերն ու քարոզչական միջոցները**

Հատկանշական է Ա. Թամանյանի ստորագրությամբ Երևանի հատակագիծը, որտեղ նշված է Հրեական համայնքի տունը [Նոյյան երկրի հրեաները, 2020, 178]: 2012 թ. և 2020 թ. հրատարակվեցին համայնքին նվիրված երկու գրքեր, որտեղ հատկապես աչքի են ընկնում հրեա գիտնականների Հայաստանում ծավալած գործունեության վերաբերյալ դրվագները: Նրանցից շատերը Հայաստանում էին հաստատվել խուսափելով խորհրդային տարբեր հանրապետություններում իրենց դեմ ուղղված հալածանքներից: Այդ գիտնականներից է խորհրդային այլախոյս Ի. Չալալսկին, ում օգնեց գիտությունների ակադեմիայի հաշվարկային կենտրոնի տնօրեն Ռ. Ալեքսանդրյանը [Նոյյան երկրի հրեաները, 2020, 395]: Ալիխանյան եղբայրներն էլ բազմաթիվ հրեա գիտնականների ներգրավվեցին Երևանի ֆիզիկայի ինստիտուտում ընթացող գիտական նախագծերին: Նրանց շարքում էին Վլ. Խարիտոնով, Իոսիֆ Գուլյման, Սեմյոն Խեյֆեց, Վալերի Խոզե, Արոն Սալման, Վիկտոր Կոշման, Բորիս Կրիժանովսկի, Բորիս Գլուշկո [Նոյյան երկրի հրեաները, 2020, 383-384]: Այս բոլորն ապացուցում են, որ Հայաստանում բոլոր ժամանակներում հրեա ժողովուրդը ապրել և արարել է՝ առանց խտրականության, հանդուրժողականության մթնոլորտում: Ներկայումս ևս հրեական փոքրաթիվ համայնքը, որը տարբեր տվյալներով տատանվում է 500-2000, ապրում է խաղաղ և ապահով պայմաններում, ինչի վկայությունները կարելի է կարդալ թերթերով համայնքի «Դավթի վահան» թերթը\*:

Դժբախտաբար վերջին տարիներին աղբրեջանական թեզերն պաշտպանող և հանրահռչակող գործիչների թիվը կտրուկ ավելացել է: Նախկինում այս գործընթացին մասնակցում էին հիմնականում Աղբրեջանում կամ ԽՍՀՄ այլ հանրապետություններում ծնված, հետագայում Իսրայելում հաստատված գործիչներ, ինչպես օրինակ Կնեսետի պատգամավոր Իոսիֆ Շազալը, արտգործնախարար Ավիգոր Լիբերմանը և շատ ուրիշներ [Աղբրեջանական սաղորանքին մասնակցեց նաև Իսրայելի արտգործնախարար Ավիգոր Լիբերմանը]:

Ներկայումս աղբրեջանական լոբբիստական կազմակերպությունները ընդլայնել են իրենց գործունեության շրջանակները, այդ թվում նաև ԱՄՆ-ում: Այս հարցերը տեղ են գտել «Կալիֆոռնիա Կուրիեր» թերթի հրատարակիչ և խմբագիր Հարութ Սասունյանի մի քանի հոդվածներում: Դրանցից մեկում՝ դիտարկելով ամերիկյան Tool Shed խմբի գործունեությունը Հ. Սասունյանը բերում է կոնկրետ օրինակներ, թե վերջինս ինչ ծավալուն աշխատանք է կատարել Աղբրեջանի հյուպատոս Էլման Աբդուլասի համար՝ հանդիպումներ կազմակերպելով ԱՄՆ համալսարանականների, քաղաքական գործիչների, ինչպես նաև հրեական շրջանակների հետ [Սասունյան Հ., Աղբրեջանի վարձած ամերիկյան լոբբիստական ընկերության տպավորիչ նվաճումների ցանկը]:

Բնականաբար այս ամենն ունենում է իր բացասական հետևանքները: Հիշենք վերջին մի քանի ամիսների երկու դրվագներ. 2023 թ. սեպտեմբերին 50 եվրոպացի պահպանողական հրեաների նամակը ուղղված Հայաստանի նախագահին և վարչապետին, որոնք հորդորում էին

\* *Դավթի վահան: Հրեական համայնքի թերթ. Magen David: газета Еврейской общины Армении, Ред. Аделина Лившиц <https://tert.nla.am/mamul/MagenDavid/NLA.html>*

Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքը շրջափակման ընթացքում չօգտագործել ցեղասպանություն բառը: Մեկ այլ խոսույն փաստ է 500 ռաբբիների նոյեմբերին Ադրբեջանում համաժողով անցկացնելու իրողությունը [Սասունյան Հ., 500 անբարոյական եվրոպացի ռաբբիներն վաճառում են հոգիները ադրբեջանական սատանային]:

Իհարկե մենք չենք կարող բացառել, որ այս բոլոր գործողությունները դրանց մասնակիցների անձնական գաղափարների և համոզմունքների դրսևորում են, սակայն վերջին տարիներին պերճախոս վերնագրերով մի քանի աղմկահարույց բացահայտումներ՝ «Ադրբեջանական լվացքատուն», «Խավիարային դիվանագիտություն», ստիպում են մտածել հակառակը:

**Եզրակացություններ:** Այսպիսով բերված փաստերն ու իրողությունները խոսույն վկայությունն են այն բանի, որ Հայաստանում հակահրեականության և հայ ժողովրդի անհանդուրժողականության վերաբերյալ ադրբեջանական թեզերը մտացածին և հիմնագուրկ են: Դրանք մերժվել և մերժվում են տարբեր երկրների, այդ թվում Իսրայելի գիտական, հասարակական շրջանակների կողմից: Պատմության ընթացքում՝ անկախ ներքին ու արտաքին հանգամանքներից Հայաստանը և աշխարհասփյուռ հայ ժողովուրդը չտարվելով ժամանակաշրջանի քաղաքական առաջնահերթություններով ու թելադրանքներով, երբևէ չի եղել հակահրեականության դատապարտելի երևույթի կրողը:

Մեկ այլ խնդիր է Ադրբեջանում խորհրդային և ետխորհրդային տարիներին Ադրբեջանում դրսևորվող հակահրեական իրողությունների և հրեական համայնքի դրության ուսումնասիրությունը: Այս խնդիրները պարզորոշ գծագրվում են Ջոշուա Քոհենի «Տարլետ» ամսագրում 2018 թ. տպագրված խոսույն ուղեգրության մեջ [Кохен Дж. (Cohen Joshua), Tablet (США): Я, Ю, Баку, Кыба (часть II)]: Պետք չէ նաև մոռանալ 1944 թ. Վոլայի ջարդերին Ադրբեջանական լեզեռնի մասնակցության և դաժանությունների մասին: Սրանք ևս հետագայում անհրաժեշտաբար պետք է դառնան առանձին հետազոտության թեմաներ:

### Գրականության ցանկ

Ադրբեջանական սադրանքին մասնակցեց նաև Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը, «Իսրայելահայեր», № 14, 2015:

Բաքվի ռաբբին կոչ է անում հրեաներին լքել Հայաստանը եւ տեղափոխվել Ադրբեջան <https://mediamax.am/am/news/region/52461/> (12.11.23)

**Ի պատիվ Շառլ Ազնավուրի՝ ձիթենու ծառ Իսրայելի Նվե Շալոմ բնակավայրում**  
<https://old.hayernaysor.am/archives/263608> (11.11.22)

**Հակոբյան Ս.**, Անհայտ կորած մարդիկ, Երևան, 1964:

**Հարություն Խաչատրյան**-Ազգերի առաքյալ, «Իսրայելահայեր», № 10, № 11, 2014:

**Հարությունյան Կ.**, Հայկական լեզեռնը, «Գարուն», № 7, 1999,

**Հարությունյան Կ.**, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.), Երևան, 2002:

**Հարությունյան Կ.**, Շառլ Ազնավուրի անձնական գործը Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում, «Ազգ» օրաթերթ, 21 դեկտեմբեր 1995:

Հայաստանում հակահրեականության (հակասեմիտականության) վերաբերյալ ադրբեջանական կեղծ թեզերն ու քարոզչական միջոցները

«Հրեաներ, պահպանե՛ք հայերին», Իսրայելական «Դետալի» («Детали») ռուսալեզու կայքի հարցազրույցը Հայաստանի հրեական կրոնական համայնքի ռաբբունապետի հետ, «Ազգ» օրաթերթ, 02-08 հունիս 2023:

Հրեաները Հայաստանում. Միջնադար, (Գիտաժողովի սեղմագրեր: Մայիսի 11-12, Եղեգնաձոր 2009), Երևան, 2010:

Նոյյան երկրի հրեաները, գլխավոր խմբագիր և գաղափարի հեղինակ՝ Ռ. Վարժապետյան, Երևան, 2020:

Ռիմա Վարժապետյանը դիմակազերծել է իսրայելական պարբերականներում հակահայ հոդվածների հեղինակներին <https://armenpress.am/arm/news/805686/rima-varzhapetyan-slams-bias-anti-armenian-articles-published-in-israeli-periodicals.html> (11.11.22)

Օրոն Յ., Փրկիչներ և մարտիկներ: Կարեկցանք ու հերոսություն: Ազնավուրյանների ընտանիքն ու «Կարմիր ազդր» Փարիզում, նացիստական բռնազավթման տարիներին, Ֆրանսիա, 2017:

Սասունյան Հ., Ադրբեջանի վարձած ամերիկյան լոբբիստական ընկերության տպավորիչ նվաճումների ցանկը <https://factor.am/10452.html> (20.11.23)

Ադրբեջանը վարձում է լոբբիստական և PR չորս ընկերություններ. Հարութ Սասունյանի հոդվածը <https://armenpress.am/arm/news/896715/adrbejany-vardzum-e-lobbistakan-ev-pr-chors-ynkerutyunner.html> (20.11.23)

Սասունյան Հ., 500 անբարոյական եվրոպացի ռաբբիներն վաճառում են հոգիները ադրբեջանական սատանային <https://mediamax.am/am/column/121456/> (20.11.23)

Абрамян Э., Кавказцы в Абвере, Москва, 2006.

Армянский легион вермахта (1941-1945 гг.), Ереван, 2002.

Век герою, полвека мифу <https://www.kommersant.ru/doc/4509006> (20.11.23)

Коэн Дж. (Cohen Joshua), Tablet (США): Я, Ю, Баку, Куба (часть II)

<https://inosmi.ru/20180909/243193193.html> (20.11.23)

Gauin M., Alexander Murinson **Baku to the future: Azerbaijan, not Armenia, is Israel's true ally** <http://www.haaretz.com/opinion/.premium-1.623390> (20.11.23)

Gut A., Armenia immortalizes fascists, anti-Semites who participated in the Holocaust

<http://www.jewishjournal.com/opinion/article/armenia-immortalizes-fascists-anti-semites-who-participated-in-the-holocaust> (20.11.23)

Murinson A., **Anti-Semitism in Armenia** <http://thehill.com/blogs/congress-blog/foreign-policy/227301-anti-semitism-in-armenia> (20.11.23)

Weiner W., Anti-Armenian Propaganda on The Eve Of The Centennial Of The Armenian Genocide In The Jewish Press <https://horizonweekly.ca/am/64801-2/> (20.11.23)

Yair A., The banality of denial: Israel and the Armenian genocide, New Brunckwick, New Jersey, 2003: